

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԹԵԱՍԱԿԱՆ

Ե. ՏԱՐԻ

ՕԴՈՍՏՈՍ

ԹԻԻ 8

ԴԷՄԿԵՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ, ՍՎԱՃԵԱՆ
(Շար.)

Սվանեանի գործը մանրամասնորէն անհայտօրէն ընթերցողներուն ծանօթացնելէ առաջ, անհրաժեշտ է որ նախազգուշացնեմ որոշակեալ թէ անոնք որ զուտ գրական յատկութիւններ գտնելու կանխամտածմամբ պիտի կարդան Սվաճուի հրապարակադրին էջերը, սահմանուած են ծանր յուսախաբուիթեան մը։ Թէպէտեւ Միտարիանի պէս վարպետ գրագէտի մ'աշակերտած ըլլայ, Սվանեան շատ տկար է ըրր գրող՝ ոճը խառնակ է, յաճախ գոհնիկ, լեզուն ազգատ, բառերը յաճախ անճշգորէն գործածուած։ Ֆրաչները անվտանգութեւ անուղիղ կերպով կազմուած։ Յայտնի կ'ընեալ որ իր գրական գաղափարակութիւնը հապճեպ է եղած ու կիսկատար։ Իր հմտութիւնն ալ սահմանափակ կը թուի. առելի քան հաւանական է որ Եւրոպայի գրական, պատմական, ընկերական կամ իմաստասիրական գլուխ-գործոցներէն շատ քիչ բան ճանչցած է։ Մտաւոր զարգացման այդ պակասը մերթ ինչի իսկ իր սկզբունքներուն արտայայտութիւն պայծառութիւնը կ'աւելցնէ, զի զգեցկաբարեան թերութիւնները բարոյական մեղանշումներու առաջնանին կը հասցնէ։

Անհրաժեշտ է որ ասոնք նկատուին, այս վերապահումները կը ճշգրտեն Սվանեանի դիմա-

դիւնը, բայց չեն բաւեր կոծանելու անոր պեղեցկութիւնը. այդ պեղեցկութիւնը կը կայանայ Սվանեանի իբր Վոյնիչի կատարած դերին մէջ. այդ դերը շատ կարեւոր է, եւ իրմէ շատ առելի գրահմուտ մտքեր՝ եղած են մեր մէջ որ այդպիսի դեր մը չեն կրցած կատարել։ Յարութիւն Սվանեանն ինկարագրելու մը եղած է, անհաւանդիր, անհասկանալի ու զգալի առկողմակալ միտք մը, որ քիչ զարգացում է ստացած, բայց կարգացած է քանի մը առողջ նկրնականեր որոնց ազդեցութիւնն իր մէջ կենդանի պահպանուած ու քննարկուող եղած է, ունեցած է կարգ մը լուրջ ու մաքուր սկզբունքներ, որոնք իր պայքարին ուղեգիծը կը կայանն, որոնց միշտ հաւատարիմ մնացած է, որոնց համար կուտած է երկայն աստի. եւ որոնց սիրոյն՝ յանձնառու եղած է ամէն տեսակ նեղութեանց եւ հալածանքներու։

Իրր գործին Սվանեան իրաւունք տնի առաջին տեղերէն մէկը բռնելու մեր ժամանակակից պատմութեան մէջ։ «Սվաճուի» յօդուածները — որոնցմէ երկայն չարք մը պիտի արտատու պենք Անահիտի մէջ, որովհետեւ անոնք ինքնին չանկեան ըլլալէ զատ՝ հետաքրքրական են նաեւ իբրեւ հայկական նորագոյն պատմութեան մէկ ամբողջ շրջանի պատկերացումներ, — յստակօրէն պիտի ապացուցանեն մեր այս գաղափարները։

Իբր գրական մարդ, իր թերութիւնները՝ ըսի արդէն՝ մեծ են. բայց հակառակ ատոր, մեր գրական պատմութեան մէջ իսկի պարտաւոր

ենք իրեն տեղ մը տալ, իբր «ուսմիբայ» - եւ իբր գրական ուսմիբայ, մեծ է նորէն իր դերը : Հրապարակագրութիւնը՝ Ոսկանեանին հետ ինքն է սկսած մեր մէջ . երգիծական գրականութիւնը ինքն է որ հիմնած է մեր մէջ առաջին անգամ, եւ Պարոնեան թատկան ըսն էր պարտի իրեն . նոյն իսկ ինքն է որ իրական կեանքէ վիպագրութիւնը Ճանկտայոց մէջ առաջին անգամ փորձած է քանի մը վիպակներով, որոնցմէ «Պանդուխտն ի ժահիճը» նշանակութեան արժանի է : Իր այդ այլազան գործին մէջ կան երբեմն կտորներ որոնք չանկան են նոյն իսկ գրական տեսակետով, եւ կը յայտնեն թէ Սվանեան կրնար ըլլալ շատ հեղոր գրագէտ մը եթէ կանոնաւոր ու չինական կրթութիւն ստացած ըլլար . իսկ երգիծական էջերուն մէջ կան այնպիսիներ, որոնք իրենց տեսակին մէջ գրեթէ կատարելաւ են, շատ ժողովրդային, կրակոտ, գունակ, ինքնադրամ, կերպով մը՝ փոքրիկ հրաշակերտներ . Իր ոճին տկարութիւնը, պէտքէ զայս նկատել, արդիւնք է ոչ միայն իր գրական պակասաւոր զարգացման, այլ եւ իր ամէն բանէ առաջ լեզուակար ըլլալու ձգտումին : Սվանեան փայլուն եւ նուրբ գրականութիւն մ'արտադրելու զեղեցկագործական մարմաջով չէ որ հրապարակ է նետուած . գործնական մարդ, տեսած է որ ժողովրդին՝ որուն վրայ կ'ուզէր ազդել՝ մտաւոր մակարդակը ո՛րքան ցած էր դեռ զգալով որ իր կոչումին էր ժողովրդին խօսիլ՝ ժողովրդին հասկանալի լեզուով մը գրած է ինչպէս կը խօսէին այն ատեն . գործածած է լեզուն մը լեզուն տանկաբանութիւններով, ոճ մը լեզուն կրկնաբանութիւններով, ուսմիկ դարձուածներով, որովհետեւ ժողովրդը այդ լեզուն եւ այդ ոճը միայն կրնար հասկնալ այդ միջոցին, հոգ տարած է նոյն իսկ բոլոր քիչ շատ խրթին հայերէն բաներուն տանկերէնը փակագծի մէջ դնել . «Մեղու»-ի յօդուածները կարդացած ատեն, մարդ կը զգայ որ այդ յօդուածները կը լսուէին ժողովրդին անուս դասէն, կը հասկցուէին, կը մարտնչէին, եւ կը սնուցանէին, կը նորոգէին, կը զօրացնէին զայն :

«Մեղու»-ի առաջին յօդուածը, որ կը շարունակուի շոքա թիւի մէջ քննական տեսութիւն մըն է հայ ազգին անցեալին ու ներկային վրայ, Ոչ ոք մինչեւ այդ վայրկեանի այդ ձեւով, եւ այդ մտահոգութիւններով, չէր նշկատած Հայութեան տեղը պատմութեան մէջ՝ հին օրիքէն մինչեւ ներկայ ժամը : Ս. Ղազարու թանաքանդները իրենց խանդոտ երեւակայութեանը մէջէն ստեղծած էին Հայոց պատմութիւն մը, այնքան փայլուն, այնքան փառանք, այնքան մեծաշուք, որքան գրեթէ ընտով մանցեցող պատմութիւնը . այդ հայրենամոլ վանականներուն ըսածին նախկին, Հայր եղած էր անցեալին մէջ վիթխարի ազդ մը, առաջինը ազգերուն, Աստուծոյ քերական ազգը, ունեցած էր անեղ աշխարհակալներ որոնք բովանդակ մարդկութիւնը գողացուցած էին, արտադրած էր քաղաքակրթութիւն մը որ գերազանց էր թուրք քան բուլղար քաղաքակրթութիւնները : Այս պատկերը շատ գեղեցիկ էր, բայց մէկ թերութիւն մ'ունէր, ճիշդ չէր : «Հիւսիսափայլին մէջ Նազարեանց եւ Նալբանդեան, ու «Անգլիական Նամական»-ին մէջ Մամուրեան, պիտի ցոյց տային յետոյ, հանգարտ ու քաղաքատես վերուժումով մը, թէ հայ ցեղը չէր եղած այն ինչ որ միջանկեւեռ ներկայացուցած էին . թէ անոր պատմութիւնը, փառաւոր ըլլալէ հետեւ, ընդհանրապէս չարք մըն էր զժողովրդութեանց որոնք ծնած են ոչ միայն արտաքին անվերջ յարձակումներէն ալ, եւ ներքին ծանր թերութիւններէ . բայց Նազարեանցէն, Նալբանդեանէն ու Մամուրեանէն առաջ, Սվանեան կ'արձակէ այդ անաչառ ու պաղ նախածքը իր ազգին անցեալին վրայ, եւ պատկերը որով իր ազգը կը ներկայացնէ, գեղեցիկ չէ, բայց ունի միակ յատկութիւն մը, ճիշդ է : Այդ ուսումնասիրութիւնը կատարեալ աշխատութիւն մը ըլլալէ հետեւ է անշուշտ . համաստե տեսութիւն մըն է եւ անի որ անհիշող մասերը . արդէն ոչ այդ յօդուածը, ոչ ալ Նազարեանցի, Նալբանդեանցի եւ Մամուրեանի գը-

րուածքները վճռականօրէն ճշգրիտ ու ամբողջական պատկերացումը չեն տար հայկական պատմութեան , քանի որ այդ պատմութիւնը դեռ ա՛յնքան մութ կէտեր ունի, ա՛յնքան անստույգ կերպով ծանօթ է . այդ բոլոր քննադատները, հերքելով ինչ որ անիրական է Մխիթարեան զեռացանակէպին մէջ , չեն գրած ա՛նոր տեղ՝ ամէն ինչ որ կայ իրականապէս մեծ ու նշանակալից հայ ցեղին պատմական գերին մէջ , Բայց անհրաժեշտ էր նախ քայ . քայել հեքեաթներու . չէնքը , պատրաստելու համար իրական պատմութեան կառուցումը . ահա այդ անհրաժեշտ քանդումի գործն է որ հետարած են այդ անկեղծ մտքերը որ ճշմարտաստիքութիւնը ազգապիտեթենէն վեր դնելու քաջութիւնն ունեցած են :

«Բարենախանձ ազգասէր մը, կ'ըսէ Սվաճեան, իր յօդուածին այն մասին մէջ ուր հայ ցեղին ներկայի քննադատելի կը սկսի , երբոր ազգին յուսաւորութեան ու յատկաշղիւթութեան նըպաստելու մտքով իր մտաց կարողութեան տրված կարծիքը հրապարակաւ յայտնելու պաշտօն մը եւ պարտք մը իր վրայ կ'առնէ , պէտք է զի կարելի եղածին չափ անկողմնաւէր եւ համարակախօս ըլլայ , ապա թէ ոչ աւելի ազգէն է զի իսպառ լռէ , Անկողմնաւէր ըլլալու է՝ վառն զի եթէ կողով բռնելով՝ աչն կողմը չվշտացնելու , չսրգողցնելու կամ չբորկացնելու համար շողոքորթութիւն ընելու ստիպուի , երբեք ազգին բարութեանը համար չի կրնար ըստ արժանեոյն աշխատիլ . զի միմայն անկողմնասիրութիւնամբ կրնայ յստակ տեսնել ընդհանրապէս ազգին եւ մասնաւորապէս անհատից պակասութիւնները , Համարձակախօս ըլլալու է, կամ՝ սանկ ըսեմ՝ պակասութիւն մը տեսած տեսնը անի յայտնելու, անոր յարգը ճանչնալու , հետեւանք իմացնելու , անոր դարմաններն ցուցընելու , եւ անկէ հետեւալու յորդորելու համոզելու պարտաւոր պիտի համարենք ինքզինքը ու չէ թէ ազգասէր պարծնեցող անձանց պէտ, պակասութիւն մը տեսած տեսնը քոզ ծածկելու է անոր վրայ , պատճառ բերելով թէ օտար ազգաց զէմ ծագու ծանակ եւ ամօթահար կ'ըլլայ ազգը , կամ ախիռչ կողովը կը վշտանայ , վասն զի ինչպէս որ վիբարայժը վէրքը տեսնելէն ետքը՝ միայն ցաւելով մը ետ դառնայ նէ , այն վէրքը չի բժշկու-

կուի , ասանկ ալ ազգերնուս մէկ պակասութեան վրայ միայն ցաւինք ու անոր դարման տանելու զանազանք , խորհրդակցութիւններ չընենք , զանի քիչ կամ բնաւ ոչ դիտողին չիմացընենք , այն պակասութիւնը որ՝ հիմա կարելի է դիւրութեամբ կը լեցվի , այն ցաւալի լուսութեամբ որ մը բոլորովին անգործ մանչի կ'ըլլայ : Այնպէս էն լուսաւորեալ ազգն ալ իր յանցանքները յայտնի կը քարոզէ , ինքզինք ինք կը ծաղընէ , օտար ազգաց տեղի չտալու համար՝ իր պակասութիւնները քննելու եւ անոնք ծաղրելու 1) : »

Հայ ցեղը Սվաճեանի աչքին կ'երեւայ իր ամբողջ պատմութեանն ընթացքին մէջ . աւելի թերութիւններով լեցուն քան յատկութիւններով . եւ անոր դժբաղդութեանց դիմաւոր պատճառը իրեն համար՝ այդ թիւրութիւններն իսկ են . սկսած , անկեղծարան , անմիաբան , այդ ցեղը՝ ըստ Սվաճեանի՝ չի յաջողիր ոչ իր թշնամիներուն յաղթել , ոչ հզօր միութիւն մը կազմել , ոչ իրմէ քաղաքակրթութիւն մը զուրա հանելով՝ զայն ուրիշներուն վրայ տարածել . պէտք է ըլլայ որ Պարթեւները զան հայկական դահլը գրաւեն՝ որպէսզի հայկական պետութիւն մը կազմուի . այդ պետութիւնն ալ երկայն չի տեսի . Հայերը իրենք իսկ , կուսակցամոլութեամբ պատռտուած , կ'երթան Պարսից թագաւորին յանձնել իրենց անկախութիւնը ու իրենց կամքով կը կործանեն Արշակունեաց թագաւորութիւնը , դարձաւ ազգային դրական շարժման ու վարդապետի Դեռնոցեանց ձեգին յարգանքի տողեր նուիրելէ յետոյ , Սվաճեան համակրանքով կ'ողջունէ Բագրատունի հասրտութեան երեւումը , բայց կը փութայ արամութեամբ նկատելու թէ այդ Հարստութիւնն ալ կը կործանի՝ գլխաւորապէս Հայերու ձեռքով վերջապէս , Թուրքեանց շնորհիւ Հայութեան վերականգնումն ալ կարճատեւ կ'ըլլայ , որովհետեւ Հայաստանի Հայերը , փոխանակ ամփոփուելու այդ նոր բոյնին մէջ եւ անոր զարգացմանն աջակցելու , կը

լքանեն զայն, կը հեռանան անկից, ու՝ անտարբեր՝ կը թողուն որ ան ջախջախութի մամուլներէն, ժառանգով վերջին նշոյլը հայկական ազատութեան:

Անցեալին այս տխուր հաւաքակերը գծելէ յետոյ, Ս վաճեան կ'անցնի ներկային: Այդ ներկան ալ միտթարական չի թուիր իրեն: Եւ սակայն անհրաժեշտ է որ այլ եւս հայ ազգը ճանչնայ իր յանցանքները ինչ իրեն հանգէպ, սրբազն ինքզինքը, օգուտի նոր քաղաքակրթութեան բոլոր բարիքներէն ու մտաւոր զենքերէն, ինքզինքը նորոգէ ու վերակազմէ, ու ջատագոյնացնէ անցեալին սխալները՝ պատրաստելով իրեն համար լուրջ ու տոկուն ապագայ մը:

Հոս թողունք դարձեալ որ ինքը խօսի հատուկ ամենէն չահեկաններէն մին է «Մեղուներն»:

«Անցեալ վերջին՝ դարերուն մէջ Հայերը ինչ վիճակ որ ունէին, նոյն վիճակի մէջ կ'ապրին գեո գրեթէ բայց միայն այս չէ՝ հապառակելի վատթարացած կրօնաւոր համայնք. այնպէս զի յուսահատեցող ինչ եւ չարաշուշակ վիճակ մը անուանենք, կարծես թէ չափազանց խօսած չպիտի ըլլանք: Ազգերին հակադէպ յայտնաբերուած թիւերն են կ'ընէ կոր, լուսաւորեալ ազգաց կը մերձանայ կոր. պոստ-ցողներուն խօսքին չենք կրնար հաւատալ. վասնզի մեր տեսածները անոնց ձայնէն աւելի ազգեցութիւն կ'ընեն կոր մեր վրայ. զի կը տեսնենք թէ տակաւին անոնց ճամբուն հիմքն անգամ չստած չենք: Ազգերնիս ինքնատեսանքը որով մէջ ազգ բառեւ աբսոլուտ եղած է՝ կը գոչէ, սակայն առկէ գիտնել թէ այս դարը մեզի համար եւրոպայի միջին դարն է մենք այն ժամանակ եւրոպան տակնուվրայ ընող անցքերովը, կրօնական կոիւնքերով ու խոտովութիւններովը զբաղած ենք: Մէկը զմիւս կ'աթոյրի եւ հերձուարող կը կոչէ նախատեղի, մէկ ուրիշը փոթեխի, հերձուարող եւ անհաւատ կ'անուանէ իր բարեկամը: Սակաւութիւն անհասանելի բազմացած այս փոքրիկ ժողովուրդը հատուածներու կը բաժնի. հետեւաբար եզբայրն իր եղբորմէն կը խորհի, անոր իր ձեռնադրութիւնը կը խնայէ, Ազգասէրներ կան, կը պոստան, չգիտեմ ինչո՞ւ համար խաբել

ուզելով զազգը, թէ մեր արհեստագործները որ օրի իրենց արհեստը կը բարակցեն, Եւրոպացիք կը հեռանան. բայց յայտնի կը տեսնենք թէ անոնք իրենց հոգեկան ժառանգ՝ գիտեցած արհեստուն մաս մը անդին անցած չեն. շատ արհեստագործն կ'ընկան, մնացածներուն ալ անկումը օրը օրի կը մերձենայ, քանի որ Եւրոպացիք իրենց հաստուածներով ճակատանք կը յագեցնեն, որուն հետեւութիւնը օր օրի ազգատուութեան եւ շքաւորութեան իրենց՝ հետեւաբար ազգին լուծեան՝ վրայ ծանրանայ. է, վասնզի այս արհեստագործները մինչեւ հիմա կամ լսած կամ համոզուած չեն թէ Եւրոպացիք իրենց արհեստները այնքան կատարելագործեցին նէ՝ ուսմամբ ու գիտութեամբ էր. անոնց սկզբունքը եւ նախակրթութիւնը զպրօցներու մէջ անիւն. անոնք յարգելով եւ մշակելով յաջողեցան: Բարեկարգ զպրօցներ, կարգաւորեալ դաստիարակութիւն կայ» կ'ըսեն որով մեծամեծ յոսանք կուտան. բայց արդիւնք՝ գրեթէ ոչինչ: Եւ այն իսկ զպրօցներէն ելող եւրոպացիները կը խոստովանեն զայնով թէ հոն ամենեւին բան մը չհասնէին գտն, անգին եւ անփոխարինելի ժամանակներ կորսուած են, որով հոն տարիներն յեղծելով եւ յորստ արհեստներուն ալ գոնէ սկզբունքը օտաւցած չլլալով՝ շատ անոնց արհեստի մը անցած են միայն անոնց խոստովանութիւնն ալ մէկդի մենք գիտենք թէ Պոլսոյ եւ իր շէր-ջակայն զպրօցներուն համար, որոնց մէջ ընդ ամէնը 40000 չափ տղայ կայ, ամիսը 6000 զրուչ կը վատնուի կոր նէ՝ տարին այս 720 000 զրուչի աւագին գումարով՝ բաւական ազգի շատարակուած, բաւական հմտութիւն ալ ստացած տարւոյ տղայ ալ չի կրնար կոր գին ազգը, մոռոտուրդը այս ստակը չկրնալով ճարել, շատ նեղութիւն կը քաշէ կոր այս զպրօցներուն ծախքը հոգալու եւ անոնց մեղքուն ալ կանգուն եւ բաց մնալուն կամ չարուակ միւլենոյն ծախքը ընկուն. հետեւաբար գոնէ քանի մը տարի միւլենոյն ընթացքով երկայնուրէ վրայ մեծ վտանգութիւն չունեցուիր. զի օրինակն ալ տեսնուած է. վիթխարի եւ մեծածախ շինութիւն մը ամենեւին ազգին չկրցաւ ծառայել, Մարդ շատարակութեան պէս ամենաարակաւոր եւ է՝ նաեւ հոգալու լաւն մը մոռցըմա կամ բաց ի թողի մնացած ըլլալէն, ազգական կրթեալ ըլլալէն տառ՝ ժամանակներն

քերամարը ազատ շարժմունքներու եւ համարձակ վարուց տէր ըլլալն ալ աչքերնուս չը զարներ կոր :

« Կրթութիւնը մինչեւ ցարդ ընդհանրական եղած չըլլալով՝ ազնի ի՛նչ է , ազգը ճ՛րջափ օրերկու է . անոր ի՛նչպէս ծառայելու է դիտացողը եւ անոր համար յոգնող ու աշխատող անձինք կարի քիչ եղած են : Անոնք ալ որ ազգին սպառնացող ամէն վտանգները, անանցանելի եղած կարօտութիւնները ազէկ ճանչցած են , ամէն մէկը թէ՛ գրութեամբ թէ՛ քերտով պոսալէն եւ շանաացիկէն եւ կամ քիչ արդիւնաւոր ըլլալն դատ , տեսնելով ալ զի իրենց կեանքը մաշցնելու ու վանքերին սպառնալու վտանգին մէջ կ'ընին , առանց անոր փոխարին ազգին փառակցնելու , վճատելով թուրքած են : Ազգին թէ՛ ամբարներէն թէ՛ ժողովրդէն անոր վիճակին քաջմանաթ անձինք անխոնջ ետանդով եւ արժանայիշատակ աշխատութեամբ պատճառ եղան ազգային ուսումնական խորհուրդը : Եւ հիմնելու , որ ի՛նչ մեծ ծառայութիւններ կրնար ընել ազգին՝ առէկ ճանչցած են , թայց տփոտ որ իրենց աշխատութիւնը չպատրուեցաւ . վտանգը զանի կաշտիդ անձինքը գեո գործի ձեռք չգարկած՝ որոշելն մը ըրին այն ուսումնական խորհուրդը որուն անուներ կայ ու ինքը չկայ , թայց չէ թէ իրենց կամովը ... »

« Ամէն կարգի , ամէն աստիճանի մարդոց մէջէն կուր , խտովութիւն , երկպառակութիւն , ատելութիւն զոնէ ժամանակ մը չվերցած որպէսզի միաբանական սուրբ ոգին անոնց աչքն ու միտքը անգամ մը ընդհանուր խեղճութեան վրայ դարձնէր : Օսմաններ , մեծագոր կայսրութեան օրոտտափառ Սուլթանը իր Ոսթիկ Նիւստիւնովը երբ ամէն իր հպատակ ազգաց մեծամեծները կը հրաւիրէ իրենց ազգին յարմար եւ պատանձ գատած արտօտութիւններն խորհրդու , ո՛վ զժողովուրդութեան ազգիս , չկրցան զեռ միաբանիլ եւ մեկ ի՛նչ պէտք ըլլալուն վրայ խորհրդակցիլ :

» Ատելութիւն մեծամեծաց մէջ , կուր , երկպառակութիւն , ատելութիւն ժողովրդին մէջ , խտովութիւն ընտանեաց մէջ , ատելութիւն եղբայր մէջ ... »

» Հայ ազգին անցեալին ու ներկային քնննութենէն սա կը գտնենք զլուսաւորպէս .

» Թէ՛ հին աստիճան Հայերը եւ թէ՛ արդի սերունդներս , անհող ու անմտադիր եղած ենք

այն ամէն բաներուն որ ազգի մը յինութեան բարգաւաճման , ուսաւորութեան եւ երջանկութեան ճամբար սկզբունքն են , շատ անգամ բուն իրենց կամովը եւ երբեմն ուրիշէն ըստիպուելով , Ազգ մը յատաջողէմ , զօրաւոր եւ երջանիկ ըլլալու համար , թէ՛ նիւթական հարստութիւնը եւ թէ՛ իմացական մէկտեղ ստանալու միջոցը գտնելու է . ոչ սոսկ հարուստ եւ ոչ լոկ քաղաքակիրթ ըլլալով կրնայ երկար ատեն դիմանալ , վկայ՝ Աւստրալիայի սոսկ հանքը արծաթի բնակիչներէն քաղաքակիրթ հետեւաբար մեծ եւ զօրաւոր ազգ մը յինելու : Ծրանացիք , աշխարհի է՛ն քաղաքակիրթ անձնքը , ասիէ քառասունհինգ տարի մը առաջ , ընկենու վրայ էին՝ հարստութեան պակեռութեամբ . ու հազիւ զիրենք ազատեց այն վտանգէն քաղաքակիրթութիւնը , որուն երբեմն հարստութենէ աւելի ուժ ունենալն ալ չենք կրնար ուրանալ :

« Անս այս յատկութիւնները պակտած են միշտ մեր ազգէն . անս ասոնք ստանձնելու կամ ստանձնողը փնտելու եւ գտնելու դժկամակ ու դանդաղ եղած ենք մենք , դուցէ զանոնք ստացնող ժողովրդը չը ճանչիլով կամ ճանչելով չտեղեկելով , թէ՛ հին աստիճան եւ թէ՛ հիմա տար ազգերուն յատաջողիմութեան ու զօրութեան նախանձախորհրդութիւն , անոնց հաւատարելու կամ գոնէ անոնց հետեւող ըլլալու փափաք չունենալով , երբեք անոնց այն աստիճան հասնելու պատճառն ալ չփնտռեցինք , Թող ըսհարցնէ մէկը ինծի թէ ինչպէս մեր ազգը՝ այս երկուքէն ալ զուրկ՝ մինչեւ հիմա ապրեցաւ , վտանգի անոր պատճառը յայտնի է . առաջ՝ քաղաքակիրթը քիչ , եւ քաղաքակիրթութիւնը աշխատ յառաջողիմած չըլլալով , անոր բարեկամ չեղողը ալ կ'ապրէր , որով մեր ազգն ալ ապրեցաւ , թէպէտ օր օրի իր անկման խոնարհիլն այս յայտնի կ'երեւէ : Սեկայն հիմա քաղաքակիրթութիւնը աշխարհի նուաճելու ու խաւըրած , անուոր եւ զօրեղ թուիչներ առած , ամէն կողմ կը յարձակ , ամէն երկրի կը տիրէ . իրեն դէմ կենալ ուղղող կը կորսանէ ի գետին : Ազգ մը հիմէ կ'ուզէ ասիկ ետեւ ալ ապրիլ՝ կամ մայս ակաբայ՝ նոր առիթ խոնարհելու է , թէպէտ լաւագոյն կ'ըլլայ իրեն համար կամաւ անոր հնազանդիլ կամ զանի ինքը հրաւիրել , Բայց հող չէ . մինչեւ այսօր զանի չկանչելով կամ չընդունելով ըրած վնասնաւու վրայ փուճ տեղը ցաւելու պարսպ ատեններ անցնէ նոս ,

ասկէ ետեւ զո՞նէ աշխատինք զանի ընդունելու : Մեր բաղդը Օսմանեան կայսրութեան ընդունած ու բռնած ընթացքէն կախում ունի : Անի ինչ կերպ ընդունելութեւն որ ընէ անոր, մենք ալ զո՞նէ նոյնք ընենք : զո՞նէ անոր չափ պատասխանինք զքաղաքակրթութիւնը : Գոնէ այս վայրկեանէն սկսինք մեր ապագային վրայ խորհրդածելու, թէ պէտ չափ ուչ սկսած պիտի ըլլանք : Համարելով թէ ասպարէզին սկիզբն ենք, աշխատինք այս ժամէն ապագային մէջ երջանիկ ու յաջող վիճակ մը ունենալու : Այս ժամէն բռնած ընթացքն ուս զէչ կամ աղէկ ըլլալէն կախում ունի մեր ալ զայլքը ատենին մէջ երջանիկ կամ թշուառ ըլլալին : Նախապայտարումը եւ անպատուութիւնը մէկընդմիջ խոտովանինք առհասարակ թէ մինչեւ հիմայ ապագային նպատակ մը չկրցանք ընել, եւ ֆանսնք ա'լ ասկէ ետեւ լըղանալովն : ապահով, յաջող եւ ուշիկ ճամբով մը առաջ ելլելու : Մենք սե'ր կըող, մեզ պաշտպանող կառավարութեան ապագային մէջ ալ մեր հիմակուսան ունեցած ազգային ամբողջութիւնն, հարստութիւնն եւ պատիւնը չկորսնցնելու աշխատինք : Տաճկաստանի ապագան ինքզինքը պիտի եւ փառաւոր նշմարել կուտայ . եւ անոր տէրը եւրոպացի ոչ հարիւրամեայ աշխատութեամբ վաստկած պատուը յիսուն տարու մէջ սառնալու ուխտ ըրած կ'երեւի : Կակայա՞ցալ ընթանալու երջանկութեան ալ ճամբուն մէջ ալ զանազակներն նէ, ա'լ հոն կը մընանք ու ա'լ չենք կրնար ապրիլ : Եկողը մեզ կը կոխէ ու կ'անցնի :

« . . Ուրեմն, բարեկամք, աշխատինք, անցնալուն մէջ կորուստնիս զո՞նէ ապագային պահանջելու կարող ընենք ինքզինքնիս : Ամբարաներ, ուսումնականներ, ժողովուրդ, ի սեր Աստուծոյ, եթէ ոչ ազգին կենացը, ձեռք ձեռքի տալով ջանանք ամենքս ալ մեր կարողութեան ներածին չափ : Կերեւորն ու ասեւթիւնը մէկգի դենելով՝ ազգերիս կանգուն եւ ողջ պահելու, զանի այս ճգնաժամութեան մէջ ճշգրտել չլիցողութեւն, հարուստ եւ քաղաքակրթ ընելու : Երպէսզի օր մը Տաճկաստան իր արագ յառաջադիմութիւններովը բոլոր աշխարհի զարմացմանն ու յարգանացը նիւթ եղած ատեն՝ մենք ալ վե՛ն ճակտով, պարզ երեսօք եւ լայն լայնօք կորող ըլլանք ըսելու : Մեր օգոստիսական տիւրովը ինչամեղով, մենք ալ աշխատած ենք ատոր այդչափ յառաջգնումուն, մեզ

ալ զովեցեք, մեզ ալ սիրեցեք : » (1)

Օսմանեան կառավարութեան ստեղծանակն զանուն համար յարգանքի, երախտագիտութեան հիացման տողերը որ կը նշմարուին այս հաստատում (եւ որունք յաճախ կը կրկնուին «Մեղու» մէջ) : այսօր՝ Թուրքն ու Հայը իրարմէ՞ զատող արեւահեղեղէն յետոյ՝ մեզի անախորժ կը թուին, բայց կը քացատուին ու կ'արդարանան այդ ժամանակին հոգեբանութեամբը : Նախ, Սվաճեալին համար, որ առաջին անգամ ըլլալով Պոլսոյ ոյն բռնապետական միջավայրի մը մէջ՝ ճշմարտագոտութեան՝ զէնքը կը սկսէր գործածել : որ կ'ուզէր պատրաստել Հայութիւն մը իր ճակատագրին գիտակից, իր թերութիւններէն բարագործած, ճշմարտապէս ազգո՞ւ մը կազմելու կարող զա՞ճած, անհրաժեշտ էր որ այդպիսի ճշմարտանշաներովինքզինքը նախապաշտպանէր թուրքական կառավարութեան զէնքը՝ անպատարութեան հրաւիրողի ամբաստանութենէն զօր իրմէ հարուածուած գծուճ հոգիները կրնային իրենց զէնքը ընել՝ իր թերթը խափանելու եւ զէնքը լռեցնելու համար : Ատից զատ սալայն, անկեղծութեան մեծ բաժին մը կայ այդ թըքաբարթութեան մէջ . թէպէտեւ Հայաստանի մէջ քանի մասերու Հայերը կը նեղուէին յաճախ Բիւրսեթէն ու Զեյթէնեթէն, ընդհանրապէս այդ միջոցին հայ ժողովուրդը Օսմանեան կառավարութեան կողմէ համակրութիւն ու պաշտպանութիւն կը վայելէր : Պոլսոյ մէջ Օսմանեան պետութեան ուրիշ մեծ քաղաքներու մէջ՝ Հայերը սիրուած էին, եւ բոլոր ասպարէզները բազմ ին իրենց առջեւ : Սուլթան Մահմուտ, Սուլթան Մեճիտ իրենց պետութեան քրիստոնեայ հպատակներուն մէջէն մասնաւոր հակում մը եւ համակրութիւն մը ցոյց կուտային Հայերուն : Թաճկահայ գործիչները՝ գրիթէ առանց բացառութեան՝ կը մտածէին թէ Օսմանեան կառավարութիւնը հայ ժողովուրդին պարզօք լանն ու վերականգնմանը համար ամենէն նպաստաւորն էր այն կառավարութեանց որոնց ներքեւ կը գտնուէին այդ ժողովուրդը իր պատմութեան նորագոյն չըր-

(1) «Մեղու», Ա. տարի, Թիւ 4-5 :

ջանին մէջ. անոնք կը կարծէին թէ այդ պահուն գոյութիւնն ունեցող կաղու թիւնը մը տատու պիտի բլլար, եւ թէ այդ թոյլատու եւ բարեկամ լուծին տակ՝ հայ ժողովուրդը պիտի կարենար մտաւորապէս ու տնտեսապէս զարգանալ ու զօրանալ եւ թերեւս օր մը հասնիլ՝ տաճկական պետութեան միջոց կցուած միաւրով՝ հայ ազգով թեան պահպանումը հիմնովին ապահովելու ։ Այդ թրքասիրութիւնը, որ կը համապատասխանէ նմանօրինակ յոյսերով տուգորուած Արուսեանին ուստասիրութեանը, կը հանուի մինչեւ իսկ արեւմտեան Հայոց հայրենասիրական գրականութեան ամենէն գիւցազներգակ փողարներուն քով ։ Միտիարեանք, ինչպէս Պոթոյի եւ Իզմիրի բանաստեղծները, մէկ կողմէն հայ անցեալին փառք տալով ելով, միւս կողմէն ամէն առթիւ օրհնութեան երգեր կը բարձրացնէին «Օսմանեան բարեկամ թէ կառավարութեան», պիտի մտնէ ու հայրախնամ ինքնակալին» ։ Փայտով այն յողազուն հեռակարին որով Սվաճեան կը տեսնէ Օսմանեան պետութեան ապագան, ան ալ բացատրելի է ։ Տաճկաստան Սուլթան Մահմուտի օրով նոր փուլի մը մէջ մտաւ, որ յարունակեց մինչեւ Համիտի շարադո շակ գալուտը ։ Եւրոպական քաղաքակրթութիւնը, որուն առջեւ Օսմանեան պետութիւնը պատենէ էր կանգնած մինչեւ այդ ատենը, այդ շրջանին յաջողեցաւ կործանել այդ պատենէն եւ ներս խոտեցնել ծաւալել սկսաւ արքայի կրկնի մէջ, եւ իմէ թուրքը, լրջօրէն ու անկեղծօրէն, մինչեւ այսօր շարունակած բլլար հիւրընկալի այդ քաղաքակրթութիւնը եւ ջանար իւրաքանչիւր գայն, Տաճկաստանը այսօր իրօք երջանիկ, հզօր ու բարգաւաճ երկիր մը կ'ըլլար ։ Անրաժեշտ էր՝ ամէն պարագայի մէջ՝ որ Հային օգուտէն այդ նոր փուլէն, — եւ օգուտեցան այն, Սվաճեան մի՞ եղած է անոնցմէ որ այդ պէտքերն ցոյց տուած են հայ ժողովուրդին իր հրաւելը լսելի եղած է եւ օգտակար հանգիստացած ։

Այս կերպով միայն կարելի է բնութեն Սվաճեանի թրքասիրութիւնը որ ինչպէս արդէն զիտել տուէ՛ր երբեք չի վտարեր հայ ազգայնական զգացումը ։ Սվաճեան խորհուրդ

կուտայ որ հայդ շրջանին մէջ՝ օգտուելով նպատաւոր հանգամանքներէն, հայ ժողովուրդը նախ իր բարոյական, մտաւորական ու տնտեսական վերանորոգումով զբաղի, որով հետեւ ատկից առաջ՝ ոչինչ կարելի է ընել որ «եւական եւ լուրջ արդիւնք յառաջ բերէ ժողովուրդ մը պէտք է որ թէ՛ բարոյական եւ թէ՛ նիւթական աւժ» մ'ունենայ, որպէսզի այդ ու ժին վրայ կրթնելով կարենայ հասնիլ իր ներքին գերագոյն բազմաբնի իրականացումը ։ Այդ ուժը՝ ըստ Սվաճեանի՝ պիտի գոյանայ, երբ հայ ժողովուրդն իր թերութեանց եւ յատկութեանց որով գիտակցութիւնն ունենայ, ու ջանայ ջնջել իր թերութիւնները եւ զարգացնէ իր յատկութիւնները, եւրոպական քաղաքակրթութեան զարդին մէջ մարգելով դանդա՛ր ։ Սվաճեանի թրքասիրութեան տակ պահպանուած ազգայնական զգացման ապացոյցը կը հայթայթեն «Միզու»ին շատ մը էջեր, որ կանգ որդապէս կը յայտնեն ամէն ինչ որ հայ Հայ Սվաճեանի սրտին մէջ, պահելով հանդերձ միշտ այդ գործովորի ազգասիրութեան խորը՝ ճշմարտութեան սէրը տիրականն ունի Սվաճեանը որ այնքան անաչառ քննութեան մը կ'ենթարկէ Հայոց անցեալը, ի՞նչ սրտազին յուզմունքով մը կը ծանուցանէ («Միզու» ։ Ա. ասարի, թիւ 5) հայ թագաւորներու դրամներու գտնուելը առասկան Հայաստանի մէջ, եւ կը հրաւիրէ իր ընթերցողները որ այդ դրամներու վրայէն շինուած պատկերներու շարքը՝ որ այդ օրերը տպուիլ սկսած է՝ գնեն ու գործարանքով կախեն իրենց տան պատերէն, որպէսզի «քանի նային, ազգասիրութիւննին եւեւնայ, անոնց սերունդն ըլլալուն վրայ սրտերին պարծիս» («Միզու» թ. Ե. տարուան 118րդ թիւին մէջ) ։ Լամբնէի հիւնալի «Մաղթանք վանք Լեւոնտանի»ին թարգմանութիւնը հրատարակելով, վերջին տունին «Լեւոնտան» բառին տեղ Սվաճեան գրած է «Հայաստան» բառը ։

«Ննջէ՛, ո՛վ իմ Հայաստան, ննջէ՛ ի իսկա՛ն» զաղութեան, անոր մէջ զոր քու գերեզմանդ » կը կոչեն՝ եւ գիտեմ որ քու օրբանդ է » ատի » ։

Բայց Սվաճեանի այդ ազգայնական խորքը
ամենէն աւելի պայծառ, զօրեղ ու թելազրա-
կան ձեւով մ'երեւան կուգայ երկու գրուածք-
ներու մէջ զորոնք «Մեղու»ի առաջին տարին
իսկ հրատարակած է եւ որոնց մին «Հայաս-

տան Մայր»ի քերթուածի պէս բան մըն է, եւ
միւսը, «Պանդուխտի Մահիճ»ի վերջակ մը :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԱՆ

(Եստուճակէն)

ԷՅՄԷՐ ԽԱՅԵՄՄԻ ԳՈՌԵԱԿՆԵՐԸ

ՀԵ

Գինի կը խմեմ ես ինչպէս ամէն մարդ որ ինձի պէս ճանաչող է .
Իմ գինի խմելու Անոր համար թեթեւ բան է .
Իմ գինի խմելու Աստուած սկիզբէն գիտէր ,
Եթէ գինի չխմեմ Աստուծոյ գիտութիւնը անգիտութիւն կ'ըլլայ :

ՀԶ

Թոյլ մի՛ տար որ հոգը քեզ գրաւէ
Ու զուր վիշտը կեանքդ լեցընէ .
Մի՛ լծաներ գիրքն ու սիրուհին շուրթը ու մարդին շուրթը՝
Դեռ հոգը քեզ չգրաւած :

ՀԷ

Դինի խմէ՛ որ քենէ փարատէ բազմատեսակ հիւանդութիւններ
Ու եօթանասուներկու ազգերու մտածմունքը փարատէ .
Մի՛ պահք բռնէր այդ դեղէն ջիւ անկէ
Մէկ ուսկ եթէ խմես՝ հազար ցաւդ կը փարատէ :

ՀԸ

Թէպէտ գինին հարած է բայց, թէ ս'վ կը խմէ,
Եւ յետոյ՝ Խօնչափ, եւ դարձեալ որի՞ հետ կը խմէ:
Ամէն առեւտրային երեք պայմաններն ուղիղ ըլլան՝ ըսէ՛,
Ո՛վ գինի չխմեր : քանի որ խմատուն մարդը կը խմէ :